

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ**

Արձանագրություն թիվ 6;
19.01.2024 թ.

1. 2024 թվականին ՀԱԱՀ գործունեության պլանավորման՝ կառուցվածքային փոփոխությունների, հաստիքացուցակի օպտիմալացման, գնումների պլանի վերաբերյալ

1.1. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին ՀԱԱՀ կառուցվածքային փոփոխությունների, հաստիքացուցակի օպտիմալացման, գնումների պլանի վերաբերյալ ստորաբաժանումների ամփոփ առաջարկությունները մինչև հունվարի 22-ը ներկայացնել աշխատակազմի ղեկավարին:

1.2. Հանձնարարել գլխավոր հաշվապահ Մ. Պողոսյանին, Վանաձորի մասնաճյուղի տնօրեն Մ. Գրիգորյանին սեղմ ժամկետում քննարկել միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող առանձին հաստատություններին և ՀԱԱՀ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումներին տրամադրվող ֆինանսավորման տարբերությունների հարցը և ձևակերպել գրության նախագիծ՝ ՀՀ ԿԳՄՍՆ ներկայացնելու համար:

2. ՀԱԱՀ կարգապահական կանոններում կատարվող փոփոխությունների վերաբերյալ

Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին մինչև հունվարի 26-ը աշխատակազմի ղեկավարին ներկայացնել առաջարկություններ ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից 2021թ-ին հաստատված «ՀԱԱՀ ներքին կարգապահական կանոնների» փոփոխության վերաբերյալ:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝



Հ.Ս. ԶԱԲՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Գ.Գ. ԱՎԱԳՅԱՆ